



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

202
XVI, 101

ՍՐԲԸՏ ՄԸՏԻՆԵԸՆՅՅ

«ԱՐԱՋԱԾ» Ի Ն

Հայոց իրանց աւագ ուղի նիւրնկալ,
Յոցերիդ մէջ զարուն ամառ անայլայլ,
Կ'գան կերբան ներսակ գլխէդ շոյախայլ,
Ողջ աշխարհի մեմուկներ «Արագած»:

ՀԵՂ.

Ա Լ Է Ք Ս Ս Ն Դ Ր Ա Պ Օ Լ
Արագածիւղ-Տպարան Յովն. Ափրեհեանի

1903

(13)

891.99

U-33

պր.

ՍՐԲԵՏ ՄԵՏԻՆԵԱՆՑ

NOV 20 1922



ԱՐԱԳԱՅԻՆ

2588

Հայոց լեանց աւագ ուղի հիւրընկալ,
 ծոցերից մէջ գտնուող ամառ անալոյլ,
 Կ'գտնուող կերտան ներսակ գլխէջ շոյափայլ,
 Ողջ աշխարհի մեմուրները «Արագած»:

ՀԵՂ.

Ա Ղ Է Գ Մ Ա Ն Դ Ր Ա Պ Օ Ղ
 Արագածի-Տպարան Յովհ. Ափիկեանի
 1903
 (13)

25 JUN 2013

Дозв. Ценз. 28 Августа 1903 г. гор. Тифлясь.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Պատանեկութեան մտնուցներէս մէջ չեն խառնուած սերբեր ու գեղարուեստ եւ ոչ էլ ցանկութիւն՝ սրնէի պանուանագարդ ներկայացնելու այս իմ եկը բանաստեղծական աշխարհին... անփորձ սրտի քրքուտներն են սոքա, սրին ցանկութիւն չունիմ բանաստեղծութիւն անուանելու. զնահատուած կլինի աշխատութիւնս երբ ընթերցողները ներողաբար վերաբերուին.

Սմբատ Մատինեանց:

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄԱՅՐԻԿԻՍ

ԱՆՄԱՀՅԻՇԱՏԱԿԻՆ

S. Ե. Մ.


Անկեղծ օրէն՝ դու տուիր
Ինձ անհամար բարիքներ,
Որ անմտաց ջերմ սիրով
Միշտ կյիշեմ օրս գիշեր:

Ինձ յոյս տուիր՝ որ սիրեմ
Հաւատ և յոյս և սուրբ սէր,
Քայց ես դոցա փոխարէն,
Սիրտս կուտամ քեզ նուէր:

Թէպէտ շունիմ գանձ, սակի,
Զիրմիդ կանգնի մեծ արձան,
Իսկ ես դոցա փոխարէն
Նուէր կուտամ իմ «Լուսման»*)

*) Եյս գրքով:

Մ Ի Գ Ի Չ Ե Ր



Խաւար գիշեր էր. ախուր ամպած,
Քրանաջան մշակն հանգիստ էր առած.
Ննջում էր անդորր, հեռի հողակրկց,
Եւ ամենօրեայ դառն աշխատանքից:

Վաղ դարթել էին շխշիկներն ու բուն,
Դեզերել գանել սրսեր խորշերում.
Իսկ լուսով սնուած խումբ-խումբ թռչուններ,
Արդէն մտել են իրանց խոր բներ:

Ահա լուում է մի խոր հառաշանք
Ու ինձ պատճառում մտայնոյց տանջանք.
Ահա շատ մօտիկ լուում են ձայնիւր,
Վշտալի սրափ ախուր մըմունջներ:

Առաջ ընթացայ, ախ, ցաւալի բան,
Տեսայ մի բանի խեղճ օտարական
Մի պատի տակին նորա նստած են,
Հանդարտ ու անձայն արցունք կլթափեն:

Ափով՝ զքո ասն մացեր է վերան,
 Ափով՝ քո լաճեր տիօրի օր յի գան,
 Վաւկեր, զիտ տարէք, տարէք ձգի հետ,
 եք սը դուք կերթաք մըր պապուց վաթան:

Պառկած էր ափուն հին մուշտակ վերան,
 Պառկած էր հանդարդ անշունչ անկենդան,
 նա վերջին անգամ խոր հոգուց հանեց,
 Յաւիտեան քնով աչքերը փակեց:

Պատառուեց ամպի ալիքն աջ ու ձախ,
 Զօդաց լուսնեակը փրփուրի միջից,
 Լսեց նա անձայն բիւր աւանդ ու վանք,
 Եկան ամպերը ծածկեցին աչքից:



Ս Ո Ւ Ն Կ

Քոցուել է գարունը, ծագկել բուրաստան,
 Մնացել էս ախուր, աղիկար սոխակ,
 Վանեցինք ցուրտ ձմեռ, դիմելով գարնան,
 Մի ողբար աղեկէզ, դու թշուառ սոխակ:

Լոյս աշխարհը քեզի երևում է մութ,
 Գարձ օրերդ երբէք քեզ չեն թուում շուտ,
 Աբբեցոյի նման շրջում անօգուտ,
 Տանջում էս իզուր շարաշար սոխակ:

Տարուայ շատ բաժինում օրերդ է սե,
 Խաւար է երևում աչքիդ լոյս արե,
 Յրէց օր թափում է քո կենաց տերե,
 Ո՛վ դու, անբաղդ վարդի սիրահար սոխակ:

Յրդ երբէք չեմ տեսել փոխուի լաւի,
 Լաց ու կոծով կեանքդ մաանել էս ցաւի,
 Քո բազմանքդ արդեօք երբ կըկատարուի,
 Գանեցով վերքերիդ դեզ ու ձար, սոխակ:

Վարդարանն էս գարձրել քեզ բնակարան,
 Վարդի թփի աակն էս շինել կացարան,
 Յաւերդ արբն քեզի կիսակենդան,
 Դարառուեց սիրտա, մի ողբար, սոխակ:

Բաղդիզ անին անա հակառակ շրջան,
 Տեղի տուեց սգոյ քո օր խնդութեան,
 Վարդենիզ պոկրեւելով՝ եղաւ հոգման,
 Ապերջանիկ ես դու, ջրատար սոխակ:

Կարկուտն եկաւ յոյսզ կտրեց յաւիտեան,
 Աւերեց, քանդեց այգի, անդաստան,
 Վարդենուզ տերեւներն հոգմալար թռան,
 Հիւսիսից վարած նետաւար սոխակ:

Վարդիզ ու վարդնուզ հասաւ մեծ վնաս,
 Հեռեց քո թշուառ կեանքին պատահաս,
 Խղճն գրութիւնդ, բնն է դու ողբաս,
 Գտիր քո խղճալոյզ մի հնար սոխակ:

Կորուցել ես քո աննման թագուհին,
 Չառ մի սգար, վնաս կուտաս քո կեանքին,
 Սարեր, քարեր շէն հանդուրժէ քո սգին,
 Մենք ինչպէս դիմանանք. ով անձար սոխակ:

Դու ես թուշոյ միջին մի ասոյ, աղբուսակ,
 Այրում ես մեզի ամեն ժամանակ.
 Մի լսիր ազաւալին դու շարագուշակ,
 Չաւնիս քեզի երբէք միտթար սոխակ:

Մի վհատի, հոգեակ, կզոյ այն վարկեան,
 Կտանեաւ դարդարուած սիրուն վարդարան:

Վարդենիզ պճնուած՝ տնորով դուրեկան,
 Վայելով թարմ սէրդ բուարար, սոխակ:

Այն ժամ մենք կլսենք քո շարականը,
 Որ պիտ լինի գովեաւ վարդիզ անուանը,
 Նար կ'գանք, կայցելենք քո մննաստանը,
 Տաղերդ լսելու շար է շար, սոխակ:



Ա Ջ Խ Ա Ր Ն

Երբ քեզի սիրով՝ առաջին անգամ
ճնուեկով մօրիցս՝ սուեցի սղջսյն,
Այն օրից ի վեր՝ դու ինձ խոտացար
Քաղզ, սերախուեթիւն և երջանկութիւն:

Առատ յոյսերով ինձի խափեցիր:
Չատերին սուիր բաղզ ու բերկրութիւն,
Եւ տեղիք սուիր ինձ սպասելու,
Որ վիշտ տանջանքով սղրամ օրն ի բուն:

Ո՛վ դու անիրաւ, խափուօրիկ աշխարհ,
Ո՛ւր է խոտումզ չկատարեցիր,
Դու երջանկութեան փառքի փոխարէն
Վսանգ տուտպանք ճակտիս գրեցիր:

Ո՛հ, ի՛նչ եմ ասում, երբ որ ես ծնայ՝
Դու իմ անզգայ լացիտ նայեցիր,
Որին հէշ շեռ տայ շարուխի շուան,
Որին պարզենէր շատ առատաձիր:

Տալիս եմ քեզի իմ վերջին հրածեշտ,
Չիմա ես ախուր մահճուճս մաշուած՝
Չունիմ անդորր կեանք բացի տանջանքից,
Քեանում եմ այսօր, դէմքս դալկացած:

Ա Ր Ա Յ Ա Ծ

Երբ որ կ'գայ գեղեցկատես գարունը՝
Չի շքանայ քեզնից ձիւնը, Արագած,
Չառ կրչիշեն քո պանծալի տնօւնը,
Չկայ քեզանից ծիրունը, «Արագած»:

Հովիտներդ ծաղկապսակ պատուական,
Քիւր անհատներ քաղցր օգիդ հիւրկ'գան,
Անուշահամ վճիղ ջուրդ մարսական,
Չատերին թանգ տեսութիւնդ, «Արագած»:

Հայսց լեքանց աւագ որդի հիւր ընկալ,
Ծոցերիդ մէջ պարուն, ամառ անայլ այլ,
Կըզան, կերթ ան, ճերմակ գլխէդ շողափայլ,
Ողջ աշխարհի մրմունջները, «Արագած»:



Գ Ա Ն Գ Ա Տ

Սիրա իմ, մի լինիր վերաբոս,
 Քանի դեռ կամ արժէք չունիս,
 Մի սգալ, մի լինիր մտաբ,
 Քանի որ ձեռքդ դեկ չունիս:

Թէ որ չլինես ոսկի արձան,
 Անկեղծ նուէրես ամբոխին,
 Գարձեալ դա չեն հաշուէ մի բան,
 Սպառնալով քո երեւին:

Ուրան կամիս՝ արն բարիք,
 Ոչ որ չի տայ քեզ համարում,
 Բարեաց սերմի ձգած հատիկ,
 Սրտերի մէջ չուտ չեն մեռնում:

Բայց այդ իրան սահմանն ունի,
 Կարգանայ նորանց սրտից,
 Որով անդադար կ'իջուի
 Պատու տալով ձգած սերմից:

Մի տիրիւր, զգայուն սիրտս,
 Այդ բոլորը կ'կատարունն,
 Երբ սե հոգին կուտամ վիշտս,
 Ան ժամանակ նոր կ'սիրեն:

Բ Լ Բ Ո Ի Լ

Կաշաղակը իւր խելքով երգիչ է դառել,
 Կըցանկանայ դայլայլի քեզ նման, բլբուլ,
 Էջը վշի վերայ է սիրահարվել,
 Քեզի է հետեւում աննման, բլբուլ:

Գոռոզ կակաչը ասում է վարդիկ,
 Կունգէ քեզ գրունել, սիրելով երգիկ,
 Գարբինն է նորոգում, դուռը վանդակիկ,
 Քեզ արծիւ են կարծում, սիրական բլբուլ:

Աւիւմն է ցանկանում քո դէմը կառել,
 Գիշատիչ գայլին դօրապետ կարգել,
 Խորամանկ աղուէսին լրտես են դրել,
 Կարծում են ուժեղ են, երգարան բլբուլ:

Չգիտենն որ դու ես անսրով գրաւիչ,
 Սիրում են քո երգը թռչունք գիշատիչ,
 Բացի քեզանից ուր է այլ երգիչ,
 Որ լինի թռչնոցը մեծ իշխան, բլբուլ:

Կարծում են որ դու ես անսրով գրաւիչ,
 Սիրում են քո երգը թռչունք գիշատիչ,
 Բացի քեզանից ուր է այլ երգիչ,
 Որ լինի թռչնոցը մեծ իշխան, բլբուլ:

Պ Օ Է Ց

Ինչ, ազատամբուիք մաքիդ դէժ անյաղթ,
 Մաքառէ դըշով, միշտ և ամեն ժամ,
 Որ գոնէ մի օր օղջունէ քո բազմ,
 Յուսայիդ լինիս անկեղծ բարեկամ:

Զուրկ օփօփանքից, և անկարեկից,
 Գլխակօր ու մունջ գրիբ շարունակ,
 Մտաշելի լեզուաւ սերմանիբ մաքեր,
 Որպէս քո ազգիդ գու անխոնջ ճշակ:

Ծոկ դու բարբոքուիր, և օգևորուիր,
 Օրաուր ծնուող վիշտ ու ցաւերից,
 Քո դառն հոգսերից անշառուած եղիր,
 Միշտ դու անբաժան քո սուր գրիշից:

Քող անձուկ շրջանն քո դէժ լայնանայ,
 Եւ ջնջուին յաւերժ քո շար թշնամիբ,
 Իսկ վսեմ բողբջ քո դէմը ցնծայ,
 Բայց գու լինիս քո փոսքով երջանիկ:

Անդորրութիւն քեզ չէ եղել երբէք,
 Իսկն վշտերի անեղ վաշտերից
 Քո գուա հաշիւդ առնէիր մէկ մէկ,
 Ինչ այս անապրեր շարշարանքներից:

Ինչ այնկոծեայ ծովի յարձանքից,
 Մաք խորաակօւի մինչև ի յաաակ,
 Եւ քո անեղբ մաքիդ շրջանից՝
 Սիրով կ'առնջուիս երկար ժամանակ:

Փոյթ չէ քեզ համար՝ թէ հայ լէզուազէտ,
 Անգին վաստակդ կ'հաշուէ ազարդին,
 Իսկ կ'լինի արձան քո վշտերուդ հետ,
 Եւ հոանդ տալով քեզի օրնիրուն:

Քո վսեմ հանճարովդ ախ ու գիշեր,
 Զանս հալածել սնայլ խաւարին,
 Եւ թող զխաութեան լոյսի տակ փայլէ,
 Յայտէ իւր ստուեր դէպի քո ազգին:

Պաշտելի պօէտ, մշակ ջանասէք,
 Մտաշելի լեզուիդ քաղցր աղանդիկ
 Պարգիւն Աստուած իւր հօթօր օւժով,
 Յէր և մեծ յայտեր, հասնիս փափազիկ:

Երբէք չ'ախրես թէ արհամարեն,
 Անմտուաց մնաս և չ'թախանձես,
 Որ գոնէ մի մարդ, մի մահկանացու
 Կեղծ կամ հաշա սրտով իբրև գովէ քեզ:

Քեզ կայ առպարէզ, շարժիբ գրիշդ,
 Քո վեհանց կամքիդ հօթ բանակով,

Եւ մարիկ դէմը մղկեր ուտաներագմ,
 Կարգամ գրուածքք ոգևոր սրտով:
 յՇնոմամ դու սիրելի քո անդորրութիւն,
 Կանի բազուկդ դադար անվախճան,
 Կի՛քէ շունչդ, սլանայ կեանքդ,
 Իսկ դու կ'ննջես հանգիստ յաւիտեան:



Ո Ր Բ Ո Ւ Ն Ի

Փշում է արդէն հիւսիսի քամին,
 Եւ թառամել է տերևը վարդին,
 Ծաղկաւէտ պարաէզր աւերակ դարձած՝
 Բեկ է ցաւն յայտնում, ով լուսին, լուսին:

Չորացած տերևներն աղօս լուսոյ տակ՝
 Կարծես զլիսակոր սղբում են անյազ,
 Վարդարան, դու էլ ախար ես ինձ պէս,
 Անցեալիդ մասին խորհում շարունակ:

Ինձ նման դուրկ չես բազկից ու փառքից,
 Եւ իմ հարստատ սրտակիցներից,
 Տանից ու տեղից անջան ապիկար,
 Գունէ գուռ ընկած ես անկարեկից:

Իմ առն ու իմ տեղ աւերակ դարձած,
 Հայր, մայր, քոյր եղբայր գերի գնացած,
 Քայց իմ շատ լացիս շկայ ինձ օգնող
 Թշուառ որբուհուս վշտերով ճնշուած:

Իսկ ես չեմ մեռած, յոյսերս են կորած,
 Արցունք էլ չունիմ սիրտս է քարացած,
 Քայց դուք տեսնում էք համեստ լուսիմին
 Հիմա ծագում է իմ ներկայ գննաց:



Իսկ դու վարդարան այլ մի վհատիլը
 Պզայ գարունը կծաղկի երկիր,
 Մայիսի միջին կբացուի վարդը,
 Սոխակն էլ այն ժամ ձայն կուտայ, գարթի:



Հ Ր Ը Ո Ի Ա Ն Ք

Նսեր իմ հոյր Վ. Մ.

Քեզ վարդ, մանուշակ, շուշան մեղեդիկ,
 Հիւսէի պսակ, մնար անթառամ,
 Երբ քեզ տեսնում եմ, իմ շքնադ քայրիկ,
 Ուզում եմ պաշտել միշտ և յարածամ:

Չէ որ, իմ հոգեակ, դու պիտի լինիս
 Իմ քաղցր կեանքի տէր և բարերար,
 Վշտերս ու ցաւերս դու պիտ վարատես
 Անարարդ վիճակում դուրով հոգատար:

Բացի քեզանից էլ ես ո՞վ ունիմ,
 Պատճառ բերկրութեան, արցունքս սրբող,
 Անվարձ, անստակ, իմ ծաղիկ կեանքիս,
 Հրճուանք, սէր դու պիտ լինիս պարզեցող:

Թէև աշխարհը ունի փառք, պատիւ,
 Սիրոյ երազներ . . . բայց չեն ինձ համար,
 Դարձաւ իմ բաղդի սիրագօծ անիւ,
 Վարդերի միջին ինձ պատահեցար:

Անթառամ պսակ, խորին ծերութիւն
 Աղերսեմ քեզի համար, ով սիրուն,
 Թող թուշի քեզ հեռ սիրտս զգասիլ,
 Անթառամ սիրոյ տաճարն աստղերուն:

Մ Ա Ն Ո Ւ Կ

Նուէր ուսանող մանկանք

Զարթիւր, մանուկ, յոյս իմ կեանքի,
Բաւ է քնես գու անհոգ,
Զարթիւր, լսիւր, խեղճ մայրիկիդ
Նպատակը ու մորմօք:

Զատ ես քնել իմ սիրելի,
Մի կորցնիւր ժամանակ,
Վեր կաց գնա ուսումնարան,
Սիրիւր ուսում շարունակ:

Ընկերներդ վարժարանում
Վաղուց դասերն են ասել,
Մեքեգակի շողքը, հոգիս,
Ննջած գլխիդ է թափել:

Դնա՛, ուսիւր, որ մարդ դառնաս,
Լինիս անդամ ազգութեան,
Իսկ քո թշուառ ծնողներին՝
Յգնող ի ժամ ծերութեան:

Վեր կաց, հոգեակ, իմ աղաւնեակ,
Գնա՛ սիրով աշխատիւր,
Ընկերներեցդ յետ մի մնար,
Զարթիւր, առաջ ընթացիւր:

Ծնողներիդ իղձ ու փափագ
Այն ժամանակ կլցնես,
Երբ իմ խրատն ու իմ յօրգօր,
Մաքիդ մէջը գորշմես:



Բ Ա Գ Ո Ս

Զատին դու կանես քեզի սիրահար,
 Զատին էլ ծառայ քո սիրուդ բազոս,
 Զատին կշինես ուղիդ խելազար,
 Զատին էլ գերի, ով անգուլթ բազոս:

Զատին իսկ կանես դու թափառական,
 Զատին էլ կուտաս տանջանք անվախճան,
 Զատին կ'լինիս սլառճառ շարութեան,
 Զատի համար էլ վերքի նիւթ, բազոս:

Զատը տաճարիդ ծառայ են դառել,
 Զատերի անմահ հոգին ես առել,
 Զատերը քեզնով բքումն են սառել,
 Զատին մատնիկ ես բանտին մուլթ, բազոս,

Զատի ընտանիքն քեզանով գերի,
 Զատի փափազը թողնում ես թերի,
 Զատին մատնում ես հրի և ջրի
 Զատին էլ ջնջիլ շուտափայթ, բազոս:

Զատի էլ կեանքին կլինիս բարերար,
 Զատի վէրքերին կանես դեզ ու ճար,
 Զատերին մաօք կշինես յիմար,
 Զատերի համար անօգուտ, բազոս:

Վ Ա Ր Կ Ա Ր Ա Ն

Ցաւում եմ քեզ վերայ սիրուն վարդարան,
 Ար դու անմշակիլ անջուր մնացիր,
 Միրուն ծաղիկներուդ շատ ափսոսող կան,
 Միայն անբարերար ախուր մնացիր:

Ո՛ւր է սրահապանդ, ով աւեր ծաղկոց,
 Մի մասդ եղել է անպէտք փշանոց,
 Անաէք անօգնական հանում ես հոգոց,
 Մայիսեան ցօղերին, դուն սըր մնացիր:

Անտեզի է յոյսդ կարած, բուրստտան,
 Բարով կ'ողջունէ քեզ քո պահապան,
 Կ'գան պարզ օրեր անուշիկ գարնան,
 Վատ օրուան ենթակայ ախուր մնացիր:

Հեռացաւ քեզանից երգիչ սոխակդ,
 Մի վախիւր, չէ անցել քո ժամանակդ,
 Զատերին այրեց քո անչէջ կրակդ,
 Ի՞նչպէ՞ սուգ հազնուած ախուր մնացիր:



Յ Ո Յ Ս Ե Ր Ս

Թող չ'վհասառւի վիրաւոր սիրտն իմ,
Որ անդորր կեանքից թեքեց իւր դիմակ,
Թէ որ բիրաւոր ցաւերսով աքնիմ,
Փայթ չէ, չի ահէ երկար ժամանակ:

Թէ ինձ ողջունէ սիրունիկ գարուն՝
Ցնծայ ինձ համար բնութիւնն ու բազմ,
Գա էլ ինձ երբէք չէ սքսնչելի,
Կեանքս դբանց դէմ միշտ կ'լինի անյաղթ:

Չէ որ դբանք չին մշանջնհաւոր,
Թշուաւիս համար երբէք օգուտ չեն,
Ինչքան որ փայլէ բերկրութեան լապտեր,
Սուտ են ինձ համար, յաւիտեան սուտ են:

Թէ որ ինձ պատէ բուք ու մառտիսով,
Եւ թէ ինձ նեղէ ձիւնը ձմեռան՝
Բքում ու ցրտում և մարդիկ տանջեն,
Գորա ինձ համար կլինեն սրուական:

Կամ թէ իմ բազդս իմ դէմն ժպտայ,
Սէր, երջանկութիւն թէ տայ ինձ համար՝
Թէ որ շարշարեն ինձի անխնայ՝
Գարձևով չեմ հաշուէ ես ինձ ապիկար:

Թէ լաւ ե թէ վատ, կամ բերկրանք, կամ սէր,
Երջանիկ օրեր կամ թշուառութիւն,
Ինձի չեն նեղէ, չեն ինձի համար,
Սուտ է իմ կեանքը լսկ թատերգութիւն:

Բայց ես ուզում եմ մտնել այն դռնից,
Որից անցել են Վահան, Գարեգին,
Ո՛հ ես ուզում եմ տարփազին փաբրի,
Լալկան Եղիշէի ոգւոր սաուերին:



Ն Ո Ւ Է Ր

Գ. Լ.նի անմահ յիւտակին
 Գեաւոր հնչեց բերկրութիւն,
 Կեանքիս երբորդ շրջանից,
 Պանդխտութիւնն ինձ քաշեց,
 Հեռացրեց իմ տանից:

Անգութ սիրոյ ճանկերում
 ձակատագիրս ինձ մաշեց,
 Բազմը ինձի անխնայ
 Տիւ, գիշեր այրեց իաշեց:

Կաման մաշը խը ուժով
 Գցեց սե որորանը
 Կարօտ թողեց խեղճուկիս,
 Տեսնել իմ գերդաստանը:

Անշատուած ես ամենբից՝
 Ընկերներեւրից մանկութեան,
 Վերջին անգամ վաղեցի
 Աչքերս առանց գերեզման:

1 Հոկտեմբերի 1896 ամի.
 Կ Ա Ր Ս:



Ա Ռ Ո Ւ Ա Կ

Քարձը սարից վայր ես վազում
 Փոքրիկ առուակ, պարզ ջրով,
 Ոլոր մոլոր ծաղկանց միջից
 Օձանման անցնելով:

Մանուկ առուակ, դեռ սպասիր,
 Գէթ մի խօսքս կատարել,
 Գու սը սիրով ծաղկոցները
 Հեռ ինայում սպողել:

Իմ պարտիզիս սիրուն ծաղկունք
 Բաւ է անջուր մնացին,
 Տնւր մի կաթիլ քս ալիքից,
 Թըջեն, ցոզեն ու անցնին:

Լսիր, լսիր, մանուկ առուակ,
 Իմ խնդիրը կատարել,
 Քիչ էլ վազը դէպի պարտէզ.
 Չորցած դաշար ուսողիր:



Յ Ի Ղ Ո Ղ Ո Ի Թ Ի Խ Ն

Մանկութեան օրեր փութով սլացաք,
Անցաք զնացիք, էլ երբ յետ կգաք,
Ա՛խ, ուրախ ժամերս, անհօգ ու աղատ,
Երազի նման թուաք, չ'դարձաք:

Ո՛ւր են ինձ սիրող քաղցր ծնողներ,
Ո՛ւր են վարժարան և ուսուցիչներ,
Ո՛ւր են մանկութեան օրեր թանկագին,
Քերկրութեամբ լցնող իմ սիրան ու հոգին:

Իմ սէր, իմ կարօտ ձեր թեքերի մէջ
Առաք, սլացաք երազի նման.
Թանկագին ժամեր երբ միտս էք գալիս՝
Յ . . . լաց եմ լինում երեխի նման:



Ն Ո Ի Է Ր

S. U. C...յիմ

Իմ ամուսնութեան անթառամ պտակ
Փշից էր հիւսած, գրած իմ գլխին,
Որ ինձ տանջում է երկար ժամանակ,
Վշտալի ախուր աշխարհի միջին:

Իմ անգութ բազրը ինձ արտրկով
Գերի է դարձել անգութ բագոսին,
Որով թշուառիս դառն տանջանքով
Ինձ կ'արտրէ իմ անխիղճ ամուսին:

Ո՛վ քաղցր աշխարհ, խափուսիկ աշխարհ,
Երբ միջումդ անցաւ քաղցր իմ մանկութիւն,
Այն օրից ի վեր, խիցիւր տաւար
Իմ երջանկութիւն և ուրախութիւն:

Վշտերով լի եմ, ցաւերով հաղար,
Ողբում եմ ախուր ես ոլոր մուրբ,
Հագիւ կարող եմ որդոցս համար
Ձեւք բերեյ միայն շոր հացի կտոր:

Քայց ո՛վ Արարիչ, շնա պիտ տանջես
Այս անտանելի դառն վիճակով,
Գիթն, ինձ փրկէ, անաէք թշուառիս,
Որ ես չ'այրուիմ անշէջ կրակով:

Ը Ն Տ Ի Ր Ն Ե Ր

Թող բացուի գոռոզ կակաշն աննման,
Եւ համեստութեամբ պսպղայ շուշան,
Նարգիզն սփռէ իւր շքահնչան
Բացուի ձնծաղիկն անուշիկ գարնան:

Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
Կարմիր թագուհի վարդն է գուրեհկան:

Թող վայնն բուեր, փնդրեն ծաթ գիշեր,
Ճշան արաուաներ, երգեն սարեակներ,
Կշկշայ կարաւ, ճխան թուրթակներ,
Հազար խումբ կազմած հաւքեր նուագեն:

Ամենից այրուն,
Ամենից սիրուն
Սիրուն բլբուլի կկլուն տաղն էր:

Թող ապրեն շաեր հարուստ երջանիկ,
Հագուին, դարդարուն փայլուն ակներով,
Թող կուտեն ոսկի . . . բայց մահուան ժանիք
Պէտքէ խորտակէ ամենքն անխուով:

Մահը գործ շունի,
Փախչում է հեռի
Մարտի մէջ ընկած անաս զինուորից:

Ն Ո Ւ Է Ր

S. W. 9. W...ից

Երանում եմ ես այն բուսկն,
Որ դու ինձ ողջոյն տուիր,
Եւ իմ տխուր դառ վշաերս
Մի համբոյրով ցրուեցիր:

ձեմում էինք այդու միջին,
Որպէս մի գոյգ տատարակներ,
Երջանկութեան օրօրանում
Տեսնում էինք երազներ:

Յայնժամ սրբան ուրախ էի,
Սիրուն անեղբ շրջանում,
Եւ Աթենաս տատուածուհին
Մեր վերայ էր նախանձում:

Ցնորքներով յափշտակուած
Երբ քս ձեռքդ բռնեցի,
Քո մարմարեայ կրծքիդ վերայ
Իմ շրթունքը հպեցի:

Իսկ հիմա ես առանց քեզի
Ոչ բուն սնիմ ոչ դադար,
Յիշատակունքս յուշ ածեկով
Տանջում եմ շաբաշար:

Ո՛ր վ իմ շքնաղ, այդ լաւ գիտես,
 Աւար առար իմ հողին.
 Մի թէ սոխակն առանց վարդի
 Գայլալում է մեղեդին:



Գ Ա Ր Տ Է Զ

Թշնամիքդ անգթարար լցուելով քս բուրաստանդ,
 Ծաղկոցիդ խնամատար ծառներուդ պաշապանն սուր է,
 Վարդենիքդ կտրակելով աւերեցին վարդաբանդ,
 Վարդէրդ փնջերով տարան, վարդիդ սիրեկանն սուր է:

Զլինի անգօր պահապանդ թշնամուդ չ'զիմազբեց,
 Երբ լսեց նորա դալուստը՝ փախաւ իր հետքը կորցրեց,
 Ո՛ր էր արդեօր, սր անխիղճը ծառներդ արմատիցը պոկեց,
 Աւազ, քս անցաւօր փառքին, միջիդ մննատանն սուր է:

Յոխակին էլ անգթօրէն զարձրեցին թափառական,
 Զրկելով կարմիր վաղիցը՝ խեղճին արին կիսակենդան,
 Յարբարտաներն անգթարար քեզի շինեցին խուժաստան,
 Բաղկունքդ արմատահան արին, ծառ ու ծառաստանն սուր է:



Թ Ղ Ո Ի Ա Ռ Ի Ն

Գլխակոր, անձայն վշահերով ախար,
Դառն արտասուքով երբ տեսնում եմ քեզ,
Քո ապերժանիկ կեանքը յիշելով՝
Հալվում եմ, մաշւում, կեանքս լինում կէս:

Տեսնել ես երբէք բաղդի ցնծութիւն,
Դու մասնակցե՛լ ես աշխարհի փառքին,
Երջանիկ մարդը քեզ չէ՛ ինամում,
Չի՛ ուղում տեսնել քեզ պէս թշուառին:

Թէ՛ սիլ օգնութեան կարող է հասնել՝
Եւ թէ՛ սիլ կարէ քեզ հեռու պահել՝
Ինչպէս հայելու մէջ՝ դու պարզ ես տեսնում
Վշտերի անհուն ալեաց ել և էջ:

Թէ՛ որ դու քեզի մխիթար կուզես՝
Փնարելու հարցում, քեզ նման ճարիր՝
Եւ նորան պատմիր քո դառն վշտեր,
Ազատ, համարձակ առաքելք իջիր:



Վ Ա Ր Դ

Ո՞վ ինձ պէտք է հրաման տար,
Մտնէի մէջ բուրաստանիդ,
Քեզ քաղէի, իմ կարմիր վարդ,
Ջմայլելով վարդարանիդ:

Ես քեզ պէտք է անշուշտ ամենւ,
Ձեզ սիրում է իմ սիրուհին,
Խոստացել է սիրով պահել,
Իւր շամամ ծծերի միջին:

Բայց սոխակդ վհատում է,
Ախ, քաշելով սիրուդ համար՝
Գողարիկ երգեր յօրինում է,
Հնչելով իւր քաղցրիկ քնար:

Սիրահար է նա քեզ վերայ,
Ափս՛ս նորա կեանքը քնքոյշ,
Այն, մեղք է, Աստուած վկայ,
Կարճել օրերդ սիրանուշ:

Չէ, չէ, հանգչիր, իմ կարմիր վարդ,
Լսիր սոխակիդ երգերին,
Նորա աշաց արցունքն առատ՝
Թող ցամաքին արտասուելէն:

Լ ՈՒ Ս Ի Ն

Մթնեց աշխարհը, ցալացին աստղեր,
 Անցաւ վառ ցերեկ, յաջորդեց զիշեր.
 Քնութիւնն ամեն իւր հանգիստն առած՝
 Վեհութեան առջև գլուխ խոնարհած:

Համեստ լուսինը երկնակամարում,
 Ասպարէզ առած՝ վեր է բարձրանում,
 Մերթ մտնում է մութ ամպերի տակը,
 Մերթ հանում է դուրս սիրուն զիմակը:

Ամբողջ աշխարհը լուսաւորելով՝
 Անցնում է սարեր, ձորեր ճեմելով,
 Ընկեր դառնալով անմխիթարին,
 Տալով ցնծութիւն թմբած մշակին:

Ուրախ հովիւր երբ լուսնին տեսաւ,
 Իւր քաղցրահնչիւն սրինգը ձեռքն առաւ,
 Եւ նորա սիրով սկսեց երգել,
 Լեռներ ու ձորեր որոտացնել:

Ո՛վ լուսին, լուսին, երկնային փայլակ,
 Երանի շրջես ամեն ժամանակ,
 Որ բնութիւնը ցնծայ քեզանով,
 Եւ գուարճանան մարդիկ քո լուսով:

Ով դու աշխարհի պարգև երկնային,
 Վշտի փարատիչ, սիրելի լուսին,
 Էլ մի թագ կենայ, շրջէ դու երկար,
 Քանի չեմ գտել կեանքիս բարերար:



Ն ՈՒ Է Ր

Սիրամարտց

Սիրունհիւս, քեզ համար կեանքս կէս կդաւ,
Մարդոց գերի կանէ կարմիր այտերդ,
Բաւ է ինձի մաշեա, սիգաճեմ կարաւ,
Աւաղ, ինձի այրեց վառվառն սէրդ:

Տէրն է արժան տեսել քեզ ինձի համար,
Միայն դու պիտ լինիս կեանքիս բարերար,
Աստուած սիրես՝ մի տանջիր ինձ շարաշար,
Տախն սիրոյ բոբբոք կամար ունքերդ:

Ի՞նչու ինձի կայրես, քաղցր սիրական,
Նոր կսկսմ շամամներովք պատուական,
Ես մաշուեցի քաղցր սիրովդ, հոգի ջան,
Արաւ թշուառիս խելագար աշերդ:

Նաղելիս, դարմանիր դու իմ վէրքերս,
Ցաւի շը ենթարկուի իմ անկեղծ սէրս,
Ինչ անեմ, տես, թառամել է պատկերս,
Ցմահ չէ որ ես եմ միակ ընկերդ:



Վ Չ Տ Ի Ս

Ի՞նչ ես բռնել իմ օձիքը, վնաս հեռու ինձանից,
Թող որ մնամ առանց քեզի գեթ մի ըսպէ հանգիստ,
Բաւ չէ ինձի վիրաւորես, մասնես կեանքս տանջանաց,
Ես չեմ ուզում հրբէք քեզ հետ մի ժամ անել կաց ու նիստ:

Է՛հ, տեսնում եմ, ով դու անգուլթ, որ բաժանուի շես
խալառ,
Այրելու շափ կրակ դարձար, կեանքս կերար ցեցի պէս,
Չունիս օգուտ քո արածից, ով դու անիրիզճ անարդար,
Չառ, շատ՝ գերեզման պիտ տանես, շկան այնտեղ ցաւ
պէս պէս:



Պ Ա Ն Գ Ո Ւ Խ Տ

Ով լուսին, լուսին, հոգոյս բարեկամ,
 Արա պանդխտիս մի բարի լինամ,
 Տուր մի ուրախ լուր իմ հայրենիքից,
 Եւ իմ անուշիկ ծննդավայրից:

Թողնելով անտէր հայրս ու մայրս,
 Աղին սիրուհիս և եղբայրներս,
 Միշտ կհառտաչեմ ևս նոցա սիրով,
 Վրդովուած կանցնի կեանքս ցաւերով:

Պատմիր ինձ, հոգիս, օտարի ընկեր
 Թէ մեղանում կան ինչ նորութիւններ,
 Մեր ընտանիքը, արդեօք ուրախ են
 Թէ անգութ բաղդից միշտ կ'զանգատուեն:

Սիրելի լուսին, թէ Ատուած սիրես
 Գոնէ մի լուր տուր իմ սիրեկանէս,
 Թէ նա ավստի է, աւագ, ինձ նման,
 Խնչու ևս լսել, տուր ինձ պատասխան:

Դէհ, պատմիր տեսնեմ, ով իմ զեղիցիկ,
 Ի՞նչ զըրթեան է քաղցր իմ հայրենիք,
 Փարտախը, հոգոս վիշտն ու դարդը,
 Ծաղկել է արգեօք մեր այգում վարդը:

Համեստ լուսինը իբրև պատասխան՝
 Արա թշուառիս այսպէս մի նշան,
 Տխուր դէմք թեքից, մտաւ ամպի տակ,
 Լցնելով խեղճիս սիրաը վառ կրակ:



Ե Ր Գ

Այ ու ալման կարմիր վարդեր,
 Ձեր սիրունիկ բլբուլն սուր է,
 Յաստիկ, շուշան, մանուշակներ,
 Ձեր սարերի սմբուլն սուր է:

Կարծես այս օր սև էք հագել,
 Կոկոններդ են ծածկուել,
 Բլբուլը երգը չէք լսել,
 Ձեր սիրունիկ բլբուլն սուր է:

Ձեզնից կարօտ մնացել է
 Նա բռնուած է, փակուել է,
 Ձեր սիրովը պատժուել է,
 Ձեր սարերի սմբուլն սուր է:

Բլմուլիկն է մութ վանդակում,
 Վիրաւորուած է գայլայլում,
 Ձեր սիրոյ կարօտն է քաշում,
 Ձեր սիրունիկ բլբուլն սուր է:

Բայց բլբուլը արդէն մենակ,
 Վարդից հեռու է վանդակում,
 Այլ արատասուք թափելով,
 Այս գոգարիկ երգն է երգում:

Յերանիք քեզ, ազատ հովիւ,
 Սարի լանջում ծաղկանց միջում,
 Հօտդ ուրախ հաւաքելով,
 Քաղցը սրինդդ ես գայլայլում:

Երանիք ձեզ սիրուն հաւքեր,
 Կազմել էք երամ խմբակներ,
 Սաւառնելով ազատ օդում,
 Իրարու սէր էք վայելում:



Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք

Ա՛խ, երբ պիտի փչէ քամին հարաւն,
Յետ տանք ձիւնը ամբողջ սաւանով,
Եւ մենք ազատուինք դառնաշունչ ձմեռից,
Գնանք գէպ ծագկոց, ուրախ երգերով:

Կամ թէ երբ պիտ գայ նոր դարնանամուտ,
Երգիչ թռչուններ դիմին մեր աշխարհ,
Կսունկներ, սարեակը, խումբ-խումբ դան մեզ մօտ,
Ողջունեն զալուստը գարնան բերկըարար:

Երգեօք, երբ պիտի մանկնք վարդարան,
Լսենք բլրուլի երգն ու ծլվլոց,
Տեսնենք արթնացած երգը բնութեան,
Եւ թնդայ օղբ ձայներով թռչնոց:

Ո՛հ, երբ պիտ տեսնենք դաշտ ու սարեր
Կանանչ ու կարմիր գգեսաներ հաղած,
Իւր գէմքը ցոյց ապ սեացած գետին,
Մինչ ստորստը լերան „Արագած“:



Տ Ա Պ Ա Ն Ա Գ Ի Ի Ր

Պչինչ է ոսկի, ոչինչ է արծաթ,
Մարդուն կ'խափէ աշխարհը ունայն-
Միտ առնենք վերջում պիտի ունենանք,
Աշխարհի միջին մի քարեայ տապան:

Թէ այս աշխարհում վայելենք լաւ կեանք,
Եւ թէ ունենանք գանձ ու շատ ապրանք,
Բայց լաւ մտածենք ապագան անցորդ,
Մեր բաժինն է միայն հինգ արշին պատանք:

Խնդում, ցնծութիւն սուտ են, երազ են,
Ո՛չ մէկն էլ հոգուն չին հաս օգնութեան,
Թէ լինի բարի անուն, լաւութիւն,
Միայն սյու կ'իշուի զկնի մահուան:

Խոնաւ գետնի տակ, նեղ տապանի մէջ,
Մարմինը փթում և հող է գաւնում,
Միայն հողին է զգում լաւ ու վատ,
Արարչի առաջ: աստղերի շարքում:



Ե Ա Յ Լ Ի

Ծիրանն ծառիդ կարմրի,
Սիրած հարկն յարմարի,
Իմ անուշիկ նազու հար,
Եսդ մի մնար, մօտ արի:

Յաղսմն ծիրանի ծառ,
Թէրերը կախ, խառ ու մառ
Աջար եր կուգայ վախար՝
Դռչդ հս պագեմ մառ մառ:

Յոտան ցանի մարգերով,
Ծառներ անկի ջերգերով,
Ես իմ հարկն դուս կանչի,
Անուշ ձէնով, երգերով:

Նստել ես հաթաղի մէջ,
Ինձ տարել ես խաղի մէջ,
Ես քեզ սրտով սիրեցի,
Քո հէրանցդ բաղի մէջ:

Բիւլբուլ տաղերիդ մեռնեմ,
Սիրուն խաղերիդ մեռնեմ,
Եսրիդ բաղերը ջուխտ են
Ջուխտակ բաղերիդ մեռնեմ:

Ախշէ, արի մեր բաղէն,
Բանանը մեր սրտի բաղէն,
Պարմ դու տուր՝ պարմ ես,
Դուշմեններն ամշեն:

Վարդիդ հոտը անուշ է,
Բիւլբուլ քո սէրդ նուշ է,
Ով սր իրան հար շունի՝
Մոլորուած ու ապուշ է:



Մ Ե Ն Ա Ս Տ Ա Ն

Անթիւ դարեր զլիսիցդ անցան անօդուտ,
Մնացել ես անրարերար, մենաստան,
Այժմ դառած շատերի մօտ խօսքի նիւթ՝
Յիշելով անցեալդ անճար, մենաստան:

Հօր պաշտպանիդ լինելով ցիր ու ցան,
Ոսկորները անգերեզման փխեցան,
Բողոքներդ մնացին անդատաստան,
Հնադարեան ծերուկ տկար, մենաստան:

Փողովուրդդ անմիտքան իրար հետ,
Չկարեցան իրանց կարգել վարդապետ,
Այդ պատճառաւ վանքերդ եղան անհետ,
Բայց անունդ կ'յիշուի երկար, մենաստան:

Փութով անցաւ ոսկիդար ժամանակդ,
Թերի մնաց քո ամեն մի փափաղդ,
Ստորացաւ քո պատիւդ, զիճակդ,
Եղար հոգերին հաւասար, մենաստան:

Քո գեղեցիկ մայրաքաղաքդ բաղմաշխատ,
Չէր թողնում, որ քեզնից պակասի մի զարդ,
Չար սարգիկը լարեցին դէմդ թակարդ,
Որ մնացիր դուն ապիլիկար, մենաստան:

Խարխափ տուիր թ շնամիջդ անխնայ,
Բնակչացը միշտ տանջելով սկամայ,
Թշուառութեանդ երբէք խղճացող չկայ,
Քարքանդուելով անպէտքացար, մենաստան:



Ս Ի Ր Ո Ի Հ Ի

Սև, սև աշերիդ մատաղ,
Եղեղ ունքերիդ մատաղ,
Քո սէրդ այրեց ինձի,
Անուշիկ սիրուդ մատաղ:

Սերունիկ դէմքիդ մատաղ,
Եոճի հասակիդ մատաղ,
Ինձ սիրով կաշկանդեցիր,
Մթախտ փռփռագին մատաղ:

Համամ ծծերիդ մատաղ,
Կարմիր այտերիդ մատաղ,
Խելքս գլխիցս ես առել,
Սիրուն ճեմելուդ մատաղ:

Հատընտիր խօսքիդ մատաղ,
Քաղցր ժպիտիդ մատաղ,
Գիտութեան շտեմարան,
Քանագէտ գլխուդ մատաղ:

Սիրուն նազերիդ մատաղ,
Ոսկէ մազերիդ մատաղ,
Երկնային դալմով քաշած,
Մէլդան ճակատիդ մատաղ:

Ն Ո Ի Է Ր

Իմ սիրելի բնկեր Ալլանին

Թող կանաչ մնայ տերեր կեանքիդ,
Եյդ ծիծաղ դէմքիդ թող խաղայ ժպիտ.
Առնէ ասպարէզ քո սիրտն ուրախ,
Եւ գուարճութեամբ մնայ միշտ խաղաղ:

Ծաղկալի փթթած բուրաստանի պէս՝
Թող ուրախ մնան քո պայծառ երես,
Անձնաւորութեանդ՝ կցսրդ բարութեան,
Եւ անվարձ պատճառ վշտիս փարատման:

Քո բարի սրտիդ ճոխ արգասիքներ՝
Գալով երևան՝ արձակեն փայլեր,
Հմուտ երգիչը՝ սիրուն քնարով
Երգէ քո անունը վէհ, պայծառ հոգով:



Ն Ա Ր Բ Ե Յ Ո Ղ

Առաջ գնան, ախպէր, էլ ինչ ես պարուս,
Եւ անցորդների կարգը խանդարուս,
Բերանիդ սանձ դիր, ինչ ես կորցրել,
Աւմ աչքդ տեսաւ՝ կուզես անպատուել:

Ամօթ է, ամօթ, գնան սուսն քնի,
Քո արարքներդ խեղ չի անի,
Յեց ու պատիժ ես, յայտնի, խայտառակ,
Է՛ր ես թափառում գիշեր ժամանակ:

Գոնէ մտածիր քո դրութիւնը,
Քո գերբաստանիդ լսի մերկութիւնը,
Այսքան ծառայելդ անգութ բազասին
Ջգալի վնաս կուտայ քո կեանքին:

Մէկ էլ բարձրացաւ մի տուր ու դմբոց,
Լաց ու հառաչանք, ձայն, ախուր սղորոց,
Դառն արատասուզը նորա խեղճ կիւնն էր,
Քնդութի ձեռքից ապտակներ կուտէր:



Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Մայրիկ, ես ինչպէս մոռանամ քեզի,
Որ մանկութիւնից մինչեւի հիմա՝
Կեանքդ զո՛հ դրած միշտ ինձի համար,
Կրեցիր տանջանք, սիրով անխնայ:

Որորանիս տակ տիւ. գիշեր անքուն,
Դու ինձ սիրակաթ ինձո՛ք տանէիր,
Քաղցր երգերով իմ փափուկ սրտիս
Քուն անդորրութեան օրօր կարդայիր:

Քունդ կարելով անկողնիցդ զուրկ,
Եղար պահապան իմ մատաղ կեանքին,
Եւ բազկատարած առ բարձրեալն Աստուած՝
Կեանք էիր խնդրում ինձի սրտագին:

Մայրիկ, իմ մայրիկ, սիրելի մայրիկ,
Արդեօք երբ կգայ այն թանդ ժամանակ,
Քո անշափ բարեաց շնչին փոխարէն՝
Ես հատուցանեմ, չ՛մնամ լծի տակ:

Մայրենի սրտիդ անուշ երազներ՝
Որ թուշկոտում են աստղերից աստղեր՝
Մարմին առնէին քո սրբոց համար,
Դու մոռանալիք սգոյ սե օրեր:

Ն Ո Ւ Է Ր

N N

Ով իմ անուշիկ բուրասաան,
Ժամանակդ եկաւ, բացուիր,
Տրապուրիչդ իմ վարդարան,
Վառուած սոխակդ եկաւ, բացուիր:

Տասն և հինգ ամ սպասել եմ,
Ըմեն պեաքերիդ հասել եմ,
Ծաղիկներդ մշակել եմ,
Յգաւնեակդ եկաւ, բացուիր:

Խուարել էր իմ արևը,
Քափուել էր կեանքիս տերևը,
Յյօթ տեսայ քո պարզեր,
Լուսնթազդ եկաւ, բացուիր:

Քազը քամին փշեց հարաւ,
Գանաչագեղ գարունն եկաւ,
Սիրտս նոր բերկրանքով լցուաւ,
Մրուսեակդ եկաւ, բացուիր:

Յր՛նուի պատճառ գաւնոզը,
Ծաղիկներդ մշակողը,
Բարի տունկեր սերմանոզը,
Լոյս ճրագդ եկաւ, բացուիր:

Յյօթ սրտով ուրախացայ,
Եբբ որ ես քեզ ծաղկած տեսայ,
Անտահման սիրով լցուեցայ,
Յր արեգիդ եկաւ, բացուիր:



Ծ Ե Ր Ո Ւ Կ

Ո՛վ թշուառ ծերուկ, բաղդազուրկ ծերուկ,
 Բաւ է դու սղբաս քո սրբոց մահը,
 Գու շատ տարիներ զարձել ես սարուկ,
 Որդուդ հետ թաղել զէնք ու զրահը:

Հողերդ յանձնել ես քո հարեանիդ,
 Կայքերդ էլ կուզին ձեռքիցդ խլեն,
 Միայն մնացել է քո թանգ մատանիդ,
 Եյն էլ կցանկան իրար մէջ բաժնել:

Ելգուցդ նոսնհիդ արմատով հանին,
 Զարգերդ խափշեկին տուեցին ընծայ,
 Միայն մարմինդ թողին մերկաբաց,
 Հանդերձրդ խեցին քեզնից անինայ:

Վիճակդ փոխուեցաւ լաւից զէտի վատ,
 Սոց հարուած դիպաւ երջանիկ կեանքիդ,
 Հատան ուժերդ, խլուեցան փառքդ,
 Վիճակուան վշտեր, տառապանք սբտիդ:

Բայց մի վհատիր, ով թշուառ ծերուկ,
 Գուցէ թէ հասնիս այն ուրախ ժամին,
 Երբ տանջանքներից, վշտերից ազատ՝
 Գու կրկին գանես բաղդիդ բանային:

Ն Ո Ւ Է Ր

Զինուորի

Ամբողջ շորս տարի պիտի սպասեմ
 ես քեզի համար, քաղցր հայրենիք,
 Ամեն տանջանքի հպատակ լինեմ,
 Անվերջ պիտ գոռամ քնքոյշ հայրենիք:

Արդէն հասել է ժամը անջատման,
 Բոթ եկաւ շուտով թշուառիս վերան,
 Աւաղ, դառել եմ ես կիտակենդան,
 Եղել եմ մտքով ապուշ, հայրենիք:

Մնացէք բարեաւ, քոյրք, ծնողք անհատ,
 եւ իմ ընկերներ, եզրաբք հարազատ,
 Մաղթեցէք ինձի անդորր կեանք աղատ,
 եւ կողջունեմ քեզ ուշ, հայրենիք:

Կաթնատու մայրիկ, աղնիւ ընկերներ,
 Իմ հրաժեշտով խոցէք ձեր սրտեր,
 Մեծափայլ աիկնայք և օրիորդներ,
 Օրհնեցէք՝ որ գամ ի նուշ, հայրենիք:



Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Երբ ես քեզ սուրի իմ վերջին հրաժեշտ՝
 Դու եղար անդարձ իմ քաղցր կեանքին,
 Էջ ես շխմեցի մանկութեան բաժակ,
 Որով բերկրում էր իմ անմեղ հոգին:

Եւ այնուհետեւ բնութիւնն անհուն
 Ինձ տուեց հասակ պատանեկութեան,
 Այն օրից ի վեր վիշտ, սէր և բերկրանք,
 Գոսպաներ տուին առնելով շրջան:

Զատ դառնութիւններ և ուրախ օրեր,
 Թողին իմ սրտին հետքեր ու նշան
 Որ հիմա կախուած իմ հոգու միջին՝
 Դառեղ են այրօմ, նկար զանազան:

Որպէս արմատներ կանաչ ծաղկունքի,
 Փթթին գօրանան պարարտ հողի մէջ,
 Այնպէս մանկութիւնն իմ քաղցր կեանքի
 Կմնայ սրտումս վառուած ու անշէջ:

Այն, այդ օրեր ես չեմ մոռանար,
 Սէրն ու գգուանքը քաղցր մանկութեան՝
 Այլ այն ժամուն երբ վերանայ հոգիս՝
 Իրակս տանեն դէպ խօր գերեզման:

Բայց ես ի՞նչ անեմ, թէ կեանքս նուիրեմ՝
 Իզուր է, իզուր, այս է բնական,
 Մանկութեան կեանքը անդարձ կմնայ,
 Էլ յետ չի դառնայ այժմ և յաւիտեան:



Բ Ե Յ Ը Թ Ի Ն Ե Ր

Սոխակ, սոխակ ջան, սոխակ
Եղար աննշան, սոխակ,
Հատ մի ողբոյ ցաւերդ,
Կլինիս հոգեհան, սոխակ:

Ունիս բազում սիրողներ,
Միայն թողին քեզ անտէր,
Դու քեզ յուսատու եղիք,
Չը թառամի քո վառ սէք:

Ասանց վարդի օրդ է սև,
Կսրուցել ես լոյս արև,
Անիծելով շար բաղդդ՝
Թափուում է կեանքիդ անրև:

Ուրախ ժամդ սրացաւ,
Քեզ ողջունեց ու անցաւ,
Սրտիդ թողեց դառն վիշապ,
Քեզ ցեց ու կրակ դարձաւ:

Թանգ բուրաստանիդ սիրով՝
Մնացել ես այրուելով՝
Աչքդ վարդենուդ զցած՝
Դիզես արցունք թափելով:

Աւեր դարձաւ վարդարան,
Եղար դու կիտակնդան,
Քս անգին սիրուդ համար՝
Բնու է ողբաս, հողի ջան:

Սոխակ, դու նկուն եղար,
Չարչարանքի բուն եղար,
Չունիս սչ մի սփոփանք,
Սարխուլացած տուն եղար:

Չ'կայ վէրքերիդ վարման,
Գնաց կեանքդ պատուական
Թշուառներին կարեկից
Բերկրեալներին աննշան:

Բնու է քաղցր գայլայիս,
Եւ շատ սրտեր դու այրես,
Քէթ մի բոսլէ հանգիտ սն,
Գոնէ ցաւիդ դեզ ճարես:

Չարին ոտնոճար եղար,
Սգալով անճար եղար,
Պատմիր ցաւդ շտակ ին,
Գտիր կեանքիդ բարերար:

Վհասելը դու ատէ,
Գիտեմ որ ցաւդ շատ է,

Քեզ հման երբէք չկայ,
Քաղցր սէրդ անհատ է:

Անուշ երգդ բաց արն,
Հիւրերիդ իմաց արն,
Անցեալդ լուռ մտածէ,
Նոր աշրհերդ թաց արն:



Ն Ո Ւ Է Ր
Ե Ր Գ Ն Ի Ա

Ինչո՞ւ շտիրենք սենք լաւ երգիչին,
Երբ սիրուն քնարը իւր ձեռքն առած,
Սէր և միութիւն ուսուցանում է,
Հմուտ, բանիմաց ուսուցիչ դարձած:

Նա իւր քնարով, եռանդուն սրտով,
Ձանազան լեզուաւ երգում է երգեր,
Եւ ժողովրդեան ուշք ու միտք լարած,
Ցանում է ընտիր սկզբանց սերմեր:

Նա մարդկութեանը միշտ օգուտ կտայ,
Եւ քրանաջան է որդէս ժիր մշակ,
Նա չէ կամակոր, կամակատար է,
Իւր արհեստի մէջ հլու հպատակ:



Գ Փ Ո Ի Ա Ր Է

Փառքով պարծեցող հարուստ իշխանին՝
Տեսածից զրկուելը շատ դժուար է,
Կամ ուսումնասէր համեստ պատանին
Կեանքից անջատուելը շատ դժուար է:

Այն մարդը՝ որ չի գիտէ իւր հաշիւը,
Ոտքի տակ է տուել եղած պատիւը,
Վերից վար է ընկել ստորաց թիւը,
Վատերին գրաւելը շատ դժուար է:

Նա՛ որ լաւից վատը փոխել է կեանքը,
Մանաւանդ ծերուց է հասել վառնզը՝
Երբ անհետանայ իւր սփոփանքը՝
Բերկրանքից զրկուելը շատ դժուար է:

1888 ամի 1 Սեպտեմբերի.
Եղիշտանգրատու:



Հ Ի Մ Ա

Ափսսո, անցան սակի դարեր, էս աշխարհը քար է դառել,
Գովաթից զրկուած մարդը հիմա իսկ անճար է դառել,
Խեղճ քեռտիւրը, դարիս շնորհիւ, խելքիցը տկար է դառել,
Վերջացաւ մեր միջից սէրը, խելօքն յիմար է դառել,
Չար ոգիքը վերջացել են, հիմա մարդն էլ շար է դառել,
Չարութիւնը մեղի վերայ անվերջ սիրահար է դառել:

Մարդու յարգը գիացող չկայ, բոլորը փողին են յարգում,
Ուղիղ մարդը անալիտան է, միշտ կեղծ խօսողին են յարգում,
Լաւութիւնը չքացել է, սէրն ուրացողին են յարգում,
Խելօքն յիմար են համարում գատարկախօսին են յարգում,
Էլ ուզուի՞նք չի մնացել, զուր բամբասողին են յարգում,
Բելխարի արբանակովը իմաստունն իսկար է դառել:

Հագար բարեբեկ փոխարէն մէկն արաւ պրծաւ դնաց,
Իննսուն թուականներին խիղճ ու հոգին թուաւ դնակ,
Իննը հարիւր թիւը հասաւ, մարդկութիւնն էլ անցաւ դնաց,
Մէկը մէկին հոր են փորում, գութն էլ անհետացաւ դնաց,
Անմեղ մարդիկ կտորելը այժմ մօտայ գործաւ դնաց,
Իրարու շար կամենալով լոյսերս խաւարէ դառել:

Ազգականը ետք է դառել, սանամէր ու քաւոր չկայ,
Մենք իրարու բանբասելով կարգին հարս հարսնաւոր չկայ,
Միշտ իրարու ենք պախարակում, մեզնից կամակոր չկայ,

Ջահել անել չէ մնացել, հետու ու մտաւոր չկայ,
Մուշթեան ասպարէզից հիմա էլ փառաւոր չկայ,
Ամեն տեսակ վատութիւնը այժմս բիւր, հազար է դառել:

Ուշքի արի, իմ բարեկամ, մտածելով մտիւր հանդէս,
Թէ ո՞վ էին քո պապերը, ի սէր հոցա գործերը տես,
Բարոյական մեծահոգի հայրենասէր Արայի պէս,
Չափ ու ոտհմանի տակ պահիր քո կրքերը այսպէս այնպէս,
Անընկճելի ոստիի դէմ, իբր Աննիբալ հզօր ու վէս,
Որ քեզ ահանողն ասէ—այն, կեանքի նաւավար է դառել:



Բ Ա Ջ Ա Է

Երանի քեզ, սաւառնում ես եթերը,
Անսահման ընթանում, քաջասիրտ բազէ,
Քեզ հետ ընկերանում սև սև ամպերը,
Տալով ոյժ, գօրութիւն աչքերիդ, բազէ:

Երբէք դու չես լինում մարդկանցը սարուկ,
Սարում են քո հզօր ճանգերից կարուկ,
Թէպէտ դու փոքրիկ ես, շրջանդ է անձուկ,
Հառաչանք չի լինի քո սրտիդ, բազէ:

Համայն թռչնոց խմբեր քո դէմ կողպայ,
Քս հզօր ուժիդ են նորա ենթակայ,
Լեռներ ու քարափներ քո դէմ կիթնդայ,
Որտեղի սիրելի միամիտ բազէ:



Տ Ե Ռ Ե Պ Ա Ն Ք

Թշուառ օրերս ինձի անելով կրտակենդան՝
Դառ փարձանքներս տնազի պէս եկան գնացին,
Յաջողութիւնը երգով, պարով ցնծութեան նման,
Քաղցրահնչիւն ուրախ սազի պէս եկան գնացին:

Տխուր բոպէն մարդու գլխուց անցնում է շատ ուշ,
Խեղճից զրկուած է դարձնում մարիցը ապուշ,
Քերկրութեան ժամն է մարդուս համար շարարից անուշ,
Վիշա ու առտապանք երազի պէս եկան գնացին:

Թէ հարուստ մարդու որդիները լինին խելազար՝
Կասեն թէ խելամուտ է, գիտուն և լեզուով ճարտար,
Ուրախ ժամերը սլաքի պէս խեղճուկիս համար՝
Անսպասելի վտազի պէս եկան գնացին:



Պ Ի Ի Լ Պ Ի Ի Լ

Վարդարանից քեզի աքոսը զրկեցին,
Հիմա թռիլը հեռու, հեռու խութաստան,
Այժմս այնտեղ կարօտ չեն քո երգերին,
Ախոս, չունին ծաղկոց ու վարդ վարդարան:

Հիմա գնա՛, այնտեղ ողբայ սև օրդ,
Օտար երկրում մարդ էլ չի՛ գայ լուրդ,
Թագուհուդ էլ որտեղ գտնես մօլորդ,
Պիւլալիւ կասեն քեզի կուղեն հրայան:

Տեսքդ տեսան նորա՛ շուտով կգմայլեն,
Նորա չեն հասկանում քո դայլայլիկէն,
Բայց քո միտը նորա համեղ կկարծեն,
Այդպիսով էլ քաղցր կեանքիդ վերջ կւտօմն:

12 Սեպտեմբերի 1896 աժի.



Բ Ի Ի Ր Ա Տ Ե Ս

Կապոյտ հորիզոնի մէջ դու փայլում ես անընդհատ,
Ո՛վ գեղեցիկ դու լուսին հնադարեան, բազմաշխատ,
Դու տեսնում ես շաա վշտեր, բազում ուրախութիւններ,
Թէ՛ տեղի, թէ՛ անտեղի, գազանի հասող արիւններ:

Ով արուսեակ, երկնային համայնութեան դու ընկեր,
Մինչև այս օրս հասած շաա կեանքեր ես դու տեսեր,
Ինչ գազանիքներ դու սինխ քո սրտումդ ամփոփած,
Ի՛նչ արամութիւն, ինչ արցունք թափում են սիշա քո
գիմաց:

Բայց դու դարձեալ, լուս ու մունջ, շեա խօտում մի բառ
անգամ,

Բոլոր մարդկանց արարքին ձեանում ես բարեկամ,
Դու քո հօօր լոյսովդ ոգեորիշ ես դառնում,
Համեստ զէմքից ցուցումով թէ՛ ուրախ ես թէ՛ արտում:

Որքան դու գազանապահ ես, որքան զէպքեր իմացող՝
Թէ՛ ախուրին ընկեր ես, թէ՛ ուրախին ողջունող,
Արդեօք, պիտ գայ ժամանակ արդարութեամբ վիայես,
Երկնային Ատեանի մէջ եղածները դու պարզես:



Ն Ո Ւ Է Ր

Օր. Ա. Մ.

Այն օրից ի վէր երբ եկար աշխարհ,
Ես քեզի եզոյ անկեղծ սիրահար,
Քս վառն սիրու կրակին է ինձ այրում,
Հաւատան հոգիս, որ քեզ եմ սիրում:

Ո՛վ սև սև աշիր, կեանքս մաշեցիր,
Մի հնար ճարէ վէրքիս, դարման գիր,
Ֆիշեր ու ցերեկ անունդ եմ յիշում,
Իմ անկեղծ սրտով ես քեզ եմ սիրում:

Քան գեւ մանկիկ ես՝ շատերին քաղցրիկ,
Հայեացքդ սիրուն, զէմքդ գեղեցիկ,
Ծաղիկ հասակիդ ես եմ սպասում,
Իմ քաղցրիկ սիրով ես քեզ ես սիրում:

Թող լինի կանաչ քո կեանքիդ տերե,
Մայրական սէրը նուիրուի պարզե,
Ծաղկիս, ունենաս բնական ուսում,
Վառ զգացմունքով ես քեզ եմ սիրում:

Դու Սաթինիկի նման մայր դառնաս,
Ազնիւ կրթումով որդոցդ ուսում տաս,
Թշուառս սիրով կեանքդ եմ օրհնում,
Ու անշափ սիրով ես քեզ եմ սիրում:

Ա Ղ Յ Թ Ի Ր

Աղօթիք յԱստուած քո կիանքի համար,
Որ նա պաշտպանէ քեզ անվիշտ անցաւ,
Աղօթիք անվերջ քո հոգուդ համար՝
Որ քեզ պարգեւէ վիճակ բարեկաւ:

Աղօթիք յԱստուած և խնդրէ այսպէս—
Թէ՛ Տէր բարերար, մի տար ինձ ցաւեր,
Յուսան, զթառատ խր սոգորմութիւն,
Որ երջանկութեան տայ քեզ լաւ օրեր:

Աղօթիք յԱստուած, որ քեզ հաշտ նայէ,
Վիշտ ու ցաւերից ազատ պահելով,
Թէ՛ որ քեզ նեղէ թշնամեաց վաշտեր,
Քանն է յազթանակ, եղբր ապահով:

Վ Ս Բ Ջ



Յ Ա Ն Կ

	Երևո
Մի գիշեր	5
Սսխակ	7
Աշխարհ	10
Արագած	11
Գանդաս	12
Բլրուլ	13
Պօէտ	14
Որբունհի	17
Հրճուանք	19
Մանուկ	20
Բազոս	22
Վարդարան	23
Յոյսերս	24
Նուէր Գ. Ա-նի անմահ յիշատակին	26
Առուակ	27
Յիշողութիւն	28
Նուէր Տ. Ս. Բ—յին	29
Ընտիրներ	30
Նուէր Տ. Ս. Գ. Մ—ին	31
Պարտէզ	33
Թշուառին	34
Վարդ	35
Լուսին	36
Նուէր սիրահարաց	38
Վշտիս	39

II.

Պանդուխտ	40
Երգ	42
Հառաչանք	44
Տաղանագիրը	45
Եայլի	46
Մենաստան	48
Սիրուհի	50
Նուէր իմ սիրելի ընկեր Սէյյանին	51
Հարբեցող	52
Մայրիկիս	53
Նուէր N N	54
Ծերուկ	56
Նուէր զինուորին	57
Մանկութիւն	58
Բայաթիներ	60
Նուէր երգչին	63
Դժուարէ	64



<< Ազգային գրադարան



NI 0359445

42418

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Գրքի հեղինակին՝ Ալեքսանդր Բոլշակովին
ԿՐԻՄՆ.

Յ91.99

Մ-33